Արձանագրություն N 4
«ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«18» «հոկտեմբերի» 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Միրոյան, Կ.Մկրտչյան, Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Միրզոյան
Բացակայում էին՝

1. «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

1.1 Հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Անիկո-Ֆարմ» ՍՊ, «Էսզեթ-Ֆարմա» ՍՊ, «Լաէկա» ՀՁ ՍՊ և «Յունիմեդ» ՍՊ ընկերությունների գրությունները՝ քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցել է վերոհիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում կցել որակավորման փաստաթղթերը:

1.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթներով՝ քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցել է «Մարգ-Ֆարմացիա» ՍՊ, «Լինարե» ՍՊ, «Նատալի Ֆարմ» ՍՊ և «Ար Մեդիկա» ՍՊ, «Պրոֆտեստ» ՍՊ ընկերություններին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունները:

1.3 Սահմանված ժամկետում.

- **«Անիկո-Ֆարմ» ՍՊ** ընկերությունը չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը,
- **«Էսզեթ-Ֆարմա» ՍՊ, «Լաէկա» ՀՁ ՍՊ և «Յունիմեդ» ՍՊ** ընկերությունները ներկայացրել են որակավորման փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով պահանջված տեխնիկական բնութագրերին,
- **«Մարգ-Ֆարմացիա» ՍՊ, «Լինարե» ՍՊ, «Նատալի Ֆարմ» ՍՊ և «Ար Մեդիկա» ՍՊ, «Պրոֆտեստ» ՍՊ** ընկերությունները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

1.4 Հոկտեմբերի 16-ին /հանձնաժողովի նիստից հետո, աշխատանքային օրվա վերջում/ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ստացվել է ճշտված տեղեկատվություն «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների պարտավորությունների վերաբերյալ, համաձայն որի «Մարգ-Ֆարմացիա» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.5 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետ 4-րդ ենթակետի և 20-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

- մերժել «Անիկո-Ֆարմ» ՍՊ ընկերության հայտը /N 7, 8, 10, 11, 20, 21, 22, 23 չափաբաժիններ/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ N 10, 11, 20, 21 չափաբաժինների մասով հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ չկան, վերոհիշյալ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայտարարվում են չկայացած, N 7, 8 չափաբաժինների մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Լեյկո» ՍՊ ընկերությանը, իսկ N 22, 23 չափաբաժինների

մասով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությանը, և առաջարկել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

- N 1, 2, 3 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Լինարե» ՍՊ ընկերությանը, N 9, 12, 19, 24, 26, 28, 30, 38 չափաբաժինների մասով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությանը, N 31, 32 չափաբաժինների մասով՝ «Էսզեթ Ֆարմա» ՍՊ ընկերությանը, N 36 չափաբաժնի մասով՝ «Ար Մեդիկա» ՍՊ ընկերությանը, N 37, 39 չափաբաժինների մասով՝ «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերությանը, N 42, 43, 44 չափաբաժինների մասով՝ «Պրոֆտեստ» ՍՊ ընկերությանը, N 45, 46 չափաբաժինների մասով՝ «Մարգ-Ֆարմացիա» ՍՊ ընկերությանը, N 17 չափաբաժնի մասով՝ «Յունիմեդ» ՍՊ ընկերությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին

3.1 Ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով՝ անգործության ժամկետից հետո N 1, 2, 3 չափաբաժինների մասով գնման պայմանագիր կնքել «Լինարե» ՍՊ ընկերության հետ, N 9, 12, 19, 24, 26, 28, 30, 38 չափաբաժինների մասով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերության հետ, N 45 չափաբաժնի մասով՝ «Մարգ-Ֆարմացիա» ՍՊ ընկերության հետ, N 47 չափաբաժնի մասով՝ «Յունիմեդ» ՍՊ ընկերության հետ:

3.2 Ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով՝ անգործության ժամկետ չսահմանել և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան «Էսզեթ Ֆարմա» ՍՊ ընկերության հետ կնքել գնման պայմանագիր N 31, 32 չափաբաժինների մասով, «Ար Մեդիկա» ՍՊ ընկերության հետ՝ 36 չափաբաժնի մասով, «Լաէկա» ՀՁ ՍՊ ընկերության հետ N 37, 39 չափաբաժինների մասով, «Մարգ-Ֆարմացիա» ՍՊ ընկերության հետ՝ 46 չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ.Դանիելյան

Անդամներ՝ _____ Է.Միրոյան

_____ Կ.Մկրտչյան

_____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Տ.Միրզոյան